«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ձայնավորների հնչյունափոխության ուսուսման իմ փորձը
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Ամալյա Մարտիրոսյան
ՄԱՐԶ	Շիրակ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն՝.....

Հիմնական մաս…….

Ձայնավորների հնչյունափոխության աղյուսակ……

Գրականության ցանկ……

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հնչյունափոխություն լեզվի պատմական զարգացման ընթացքում բառի հնչյունական կազմի կրած փոփոխությունն է: Հնչյունափոխությունը բառակազմության կամ ձևակազմության /բառի թեքման/ ժամանակ բառի հիմքի կազմում որևէ հնչյունի կամ հնչյունակապակցության փոփոխությունն է, անկումը կամ հավելումը: Հնչյունափոխվել կարող են և՛ ձայնավոր, և՛ բաղաձայն հնչյունները, ինչպես նաև երկհնչյունները: Հայերենում ամենից շատ տարածված է շեշտափոխական հնչյունափոխությունը: Հայերենում շեշտը կայուն է՝ բառի վերջին ձայնավորը: Բացառություն է կազմում «ը» ձայնավորը՝ գաղտնավանկի կամ իբրև հոդ, որը չի շեշտվում: Շեշտակիր ձայնավորը ուժեղ է հնչվում, իսկ բաղադրիչ ավելանալիս, երբ շեշտից զրկվում է, թուլանում է և ենթարկվում փոփոխությունների, վերածվում է այլ ձայնավորի, դառնում է լսվող, բայց չգրվող ը-ի, երբեմն դառնում է բաղաձայն հնչյուն /ձ<u>ո՛ւ</u> – ձվակեր, պատանի՛ - պատանյա՛կ և այլն/: Կան շատ դեպքեր, երբ շեշտից զրկված ձայնավորը պահպանվում է: Նույն բառը տարբեր դիրքերում տարբեր փոփոխությունների է ենթարկվում /բարի՛ / բարեկա՛մ - բարյացակա՛մ - բարություն/:

Իհարկե, բառի շեշտակիության կամ հնչյունափոխության մասին խոսելիս նկատի պետք է ունենանք ոչ թե փոխառյալ բառերը կամ բացառություն կազմող մի շարք բառեր, այլ վերջնավանկում շեշտ կրող բառերը: Շեշտի տեղափոխության հետ կապված հնչյունափոխությունը կոչվում է շեշտափոխական հնչյունափոխություն: Բացառություն է կազմում ը ձայնավորը:

Նկատում ենք, որ որոշ բառեր գործածվում են 2 ձևով՝ *էշով – իշով, բվի – բուի, Դավիթի – Դավթի* և այլն: Այս դեպքում մի շարք բառեր տարբեր իմաստներ են ձեռք բերում: Օրինակ՝

տեր – տիրություն անել՝ խնամել

տեր – տերություն՝ երկիր

Շեկ – շիկանալ՝ տաքանալուց կարմրել

Շեկ – շեկանալ՝ շիկահեր դառնալ

Կամ՝ հղանալ – հղիանալ, տնօրենություն – տնօրինել և այլն[1]:

[1] Յուրի Ավետիսյան, Հ.Զաքարյան – Հնչյունաբանություն, էջ 72

ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

«Հնչյունափոխություն» թեման ուսուցանվում է միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանում, երբ աշակերտը ուղղախոսական և ուղղագրական շատ գիտելիքներ է ձեռք բերում: Համընթաց անցնելով ուղղագրությունը և հնչյունափոխությունը՝ սովորում են շատ բառերի ճիշտ արտասանությունը, դրանից էլ կախված՝ նաև ուղղագրությունը: Տողադարձի հետ կապված շատ խնդիրներ լուծվում են, երբ լավ է ուսուցանվում հնչյունափոխությունը՝ որտե՞ղ սղվեց ձայնավորը, որտե՞ղ դարձավ գաղտնավանկի ը: Շահում է նաև ուղղախոսությունը. ոչ թե արտասանել երկ/ը/րի, այլ երկրի, ոչ թե ընտանեական, այլ՝ ընտանեկան և այլն: Ուրեմն, մեր առջև դրված շատ նպատակներ և խնդիրներ՝ բառի ճիշտ օգտագործում, ճիշտ գրություն, ճիշտ արտասանություն, ինչու չէ, նաև բառը ճիշտ շեշտադրմամբ արտասանելը, կարելի է լուծված համարել:

Նպատակ է դրվում նաև բառապաշարի հարստացումը: Չպետք է սահմանափակվել միայն դասագրքում եղածով, այլ նոր, անծանոթ բառերի օրինակներով զարգանում է աշակերտի խոսքը, բառապաշարն է հարստանում. չէ՞որ տրված բառերով կազմում է բարդ կամ ածանցավոր բառեր, որոնք օգտագործում է տեքստեր կազմելիս կամ շարադրություններ գրելիս:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

Հայերենում հնչյունափոխվում են բոլոր ձայնավորները՝ *է /բառամիջի ե/, ի, ու, ը, ա, ո /բառամիջի/:* Ինչպես ասվել է, հնչյունափոխության պատճառը շեշտից զրկվելն է, երբ բառի վերջից բառի վերջից բաղադրիչներ են ավելանում՝ արմատ, ածանց, հոլովական կամ հոգնակերտ վերջավորություններ: Թերևս բացառություն է կազմում **ը** ձայնավորը, որը չի շեշտվում, բայց ենթարկվում է հնչյունափոխության: Այս համատեքստում խոսելիս պետք է նկատի ունենանք, որ որոշ դերանուններ, վերաբերականներ չեն շեշտվում վերջին վանկում /*ո՛րնէ, իհա՛րկե, գո՛նե* և այլն/:

Հնչյունափոխությունը տեղի է ունենում 2 ձևով՝

ա/ շեշտից զրկված ձայնավորը վերածվում է այլ հնչյունի՝ ձայնավոր կամ բաղաձայն, որը նշվում է մաթեմատիկայում օգտագործվող մեծի նշանով՝ >:

բ/ սղվում է, որը նշվում է դեպի վեր բարձրացող սլաքով՝ ↑:

Մաս 1 է /ե/ ձայնավորի հնչյունափոխությունը

Մտագրոհի միջոցով փորձում եմ ուսուցանել: Գրատախտակին գրում եմ 1-2 նախադասություն, հանձնարարում եմ գտնել այդտեղ օգտագործված բառերի ուղիղ ձևը:

Օրինակ՝

ա/ Եթե աշխարհում տիրեն սերն ու համերաշխությունը, բոլոր մարդիկ երջանիկ կլինեն:

բ/ Երբ ինքնաթիռը վարէջք կատարեց օդանավակայանում, ուղևորներն սկսեցին իջնել:

Երբեմն իմ օգնությամբ, երբեմն ինքնուրույն գտնում են այդ բառերը՝ *տիրի – տեր, իջնել – էջ:*

Հանձնարարում եմ գտնել նաև բառեր, որոնք կարող են հնչյունափոխվել: Դրանք են՝ *սեր, վայրէջք:*

Այսպիսով, տեսնում ենք, որ բառասկզբում է գրվող փակ վանկ ունեցող բառերի **է**-ն դառնում է **ի**:

է՛շ – իշատե՛ր

է՛գ – իգակա՛ն

է՛ջ – իջնե՛լ

Հաջորդ կանոնը այն է, որ բառամիջի **<u>ե</u>**-ն դառնում է **<u>ի:</u>**

զե՛նք – զինակի՛ր

սե՛ր – սիր՛ել

զե՛ս – զիսա՛ստղ և այլն:

Դասագրքում եղածին հավելենք ևս մեկ հնչյունափոխություն, երբ փակ վանկի **<u>ե</u>**-ն կարող է սղվել: Այդ բառերից են՝

մժե՛ղ – մժղո՛ւկ

գոմե՛շ – գոմշաձա՛գ

ավե՛լ – ավլե՛լ

Ավելացնում եմ նաև այն, որ շատ բառերում, շեշտից զրկվելով, հնչյունափոխություն չի լինում: Օրինակ՝

լե՛ռ – լեռնայի՛ն

ջե՛րմ – ջերմությո՛ւն

խե՛լք – խելա՛ցի և այլն:

Աշակերտների հետ միասին գրատախտակին գծում ենք է/ե/ ձայնավորի հնչյունափոխության գծապատկերը:



Հանձնարարում եմ համեմատել նախապես իմ գրած բառերի շարքերը:

ա/ է՛շ – իշատե՛ր	*բ/ շե՛ն – շինակա՛ն*
է՛գ – իգակա՛ն	*սե՛զ – սիզավե՛տ*
է՛ջ - իջվա՛ծք	*վե՛րք – վիրավո՛ր*
գ/ սե՛րմ – սերմացո՛ւ	*դ/ գո՛մեշ – գոմշո՛ւկ*
պե՛տք – պետքակա՛ն	*մժե՛ղ – մժղո՛ւկ*
արգե՛լք - արգելե՛լ	*ավե՛լ - ավլե՛լ*

Հանձնարարում եմ տնային աշխատանք **<u>է/ե/</u>** ձայնավորի հնչյունափոխությանը պատկանող բառերով կազմել շարադրանք:

Հաջորդ ժամին ամրակայելու համար գրատախտակին գրում եմ բառեր, որոնցից պետք է կազմեն նոր բառեր՝ վերջնաբաղադրիչ ավելացնելով՝ *անեծք, գես, կես, քեն, դեմ, սեգ, սեզ:*

Իսկ հաջորդ վարժությամբ հանձնարարում եմ իմ տված բառերի մեջ գտնել ուղիղ ձևը՝ *դիզել, գիտություն, կիզիչ, դիտել, դիմաց, հրավիրել, հանդիսավոր, պարտիզպան, միգապատ, քինախնդիր* և այլն:

Մաս 2 – ի ձայնավորի հնչյունափոխությունը

Նոր նյութի հաղորդումը սկսում եմ դասագրքի վրա աշխատանք կազմակերպելով: Հանձնարարում եմ Հովհաննես Շիրազի «Գարնանամուտ» բանաստեղծությունից գտնել բառեր, որոնց մեջ ի ձայնավորի հնչյունափոխված կամ չհնչյունափոխված ձևեր կան: Դուրս են գրվում հետևյալ բառերը. *երկինք, հոգուս, սիրտ, հոգեթով, պատանի, երկրեերկիր:* Դարձյալ մտագրոհի միջոցով դրանցով կազմում են նոր բառեր:

Օրինակ՝

երկի՛նք – երկ/ը/նքի՛ց /ի > ը/

երկի՛նք – երկնային /ի ↑/

սի՛րտ – սրտոտ, սրտային /ի > ը/

հոգի՛ – հոգեթո՛վ /ի + ա = ե/

հոգի՛ – հոգյակ /ի > յ/

պատանի՛ – պատանեկան /ի + ա = ե/

պատանի՛ – պատանյա՛կ /ի > յ/

երկի՛ր – երկրեերկի՛ր /ի ↑/

Մնացած կանոնները՝ կապված ի ձայնավորի հնչյունափոխության հետ, լրացնում եմ՝ դարձյալ աշակերտների մասնակցությամբ: Հանձնարարում եմ կազմել նոր բառեր տրված բառերով:

ինձ /կենդանի/ - ընձուղտ, ընձենի /ի > ը/

ինչք – ընչաքաղց, ընչասեր /ի - ը/

իղձ – ըղձալի /ի > ը/

ձիգ – ձգել /ի > ը/

ջիղ – ջղային /ի > ը/

երկիր – երկրային /ի ↑/

տիկին – տիկնիկ /ի ↑/

ծաղիկ – ծաղկափոշի /ի ↑/

Գրատախտակին գրում եմ բառեր, որոնց բաց վանկի **ի**-ն պահպանվում է՝

հղի՛ – հղիանա՛լ

բերրի՛ – բերրիությո՛ւն

որդի՛ – որդիակա՛ն

կանացի՛ – կանացիությո՛ւն

գյուղացի՛ – գյուղացիությո՛ւն

քաղաքացի՛ – քաղաքացիությո՛ւն և այլն:

Ի մի բերելով ողջ ասվածը՝ տեսնում ենք, որ **ի** ձայնավորի հնչյունափոխությունը բազմազան է, նկատում ենք, որ նույն բառը տարբեր դիրքերում տարբեր փոփոխությունների է ենթարկվում: Ամրապնդելու համար հանձնարարում եմ կատարել հետևյալ առաջադրանքը:

Առաջադրանք 1 – Տրված բառերից կազմել տարբեր բառեր այնպես, որ հնչյունափոխության տարբեր ձևեր լինեն կամ չհնչյունափոխվեն:

հոգի – հոգյակ – հոգեորդի - հոգեմա – հոգևոր

որդի – որդյակ – որդեսեր – որդիական

բարի – բարյացակամ – բարեգութ – բարիանալ

Առաջադրանք 2

Տրված բառաշարքում գտնել ածանցները, ցույց տալ տարբերությունը և գրել առանձին շարքերով՝ *տասնյակ, հոգյակ, կղզյակ, հարսնյակ, պատանյակ, որդյակ, հարյուրյակ, միամյակ, հնդյակ, հարյուրյակ, աղավնյակ:*

Բաժանում եմ 2 խմբի և հանձնարարում առանձնացնել և գտնել **յակ** ածանցով և **ակ** ածանցով բառերը:

յակ	**ակ**
տասնյակ	*հոգյակ*
հարսնյակ	*կղզյակ*
հարյուրյակ	*պատանյակ*

միամսյակ *որդյակ*

հնգյակ *աղավնյակ*

Հանձնարարվում է տնային աշխատանք: Կազմել նախադասություն *բարություն, գերություն, թշնամություն, աղավնատուն, փոշոտում* բառերով և ցույց տալ հնչյունափոխությունը:

Հաջորդ դասաժամին կազմում ենք նաև **ի** ձայնավորի հնչյունափոխության գծակարգը:



Վերջում հավելենք, որ **ի**-ով վերջացող մի քանի միավանկ բառեր հնչյունափոխության չեն ենթարկվում:

Դրանք են՝ *ձի – ձիուկ, ձիատեր, ձիարշավարան*

դի – դիակ, դիակապուտ, դիակառք

թի – թիակ, թիականման

լի – լիություն, լիանալ, լիաբուռն

մի – միություն, միակամ[2]

Մաս 3 Ու ձայնավորի հնչյունափոխությունը

Այս ձայնավորի հնչյունափոխությունը ուսուցանելիս դարձյալ աշակերտներին հանձնարարում եմ աշխատել տեքստի վրա: Ընտրում եմ Գեղամ Սարյանի «Կարոտ» բանաստեղծությունը և պահանջում եմ գտնել և դուրս գրել բառեր, որոնց մեջ **ու**-ն

[2] Յուրի Ավետիսյան, Հ.Զաքարյան – Հնչյունաբանություն, էջ 77

հնչյունափոխվել է կամ կարող է հնչյունափոխվել: Նախորդ ձայնավորների հնչյունափոխությանը անցնելիս փորձ ենք ձեռք բերել և սիրով աշխատում են: Տալիս եմ 3 րոպե ժամանակ: Դուրս են գրում հետևյալ բառերը՝ *տուն, արթուն, անքուն, գարուն, ջրեր, առու, մամուռ, մանուկ, մանկանալ, իրիկուն, քուն:*

Մտագրոհի միջոցով խմբավորում ենք ըստ հնչյունափոխության ձևի: Ստացվում է հետևյալը.

ա/ *տուն – տնային, տնական /ու > ը/*

ջուր – ջրեր /ու > ը/

քուն – քնել /ու > ը/

բ/ *արթուն – արթնանալ /ու ↑/*

գարուն – գարնանային /ու ↑/

մամուռ – մամռոտել /ու ↑/

մանուկ – մանկություն /ու ↑/

իրիկուն – իրիկնադեմ /ու ↑/

գ/ *առու – առվակ /ու > վ/*

Ավելացնում ենք բառեր՝ *ձու – ձվածեղ*

թթու – թթվահամ /ու > վ/

լեզու – լեզվանի /ու > վ/

ուրու – ուրվական /ու > վ/

մեղու – մեղվանոց /ու > վ/

Լրացուցիչ գրատախտակին գրում եմ «երկու» բառը և հանձնարարում եմ կազմել նոր բառեր: Աշակերտները կազմում են հետևյալ բառերը.

երկրորդ /ու ↑/

երկհարկանի /ու ↑/

երկհնչյուն /ու ↑/

երկանիվ /ու ↑/

երկակի /ու ↑/

Այսինքն՝ բառավերջի բաց վանկի **<u>ու</u>**-ն սղվում է: Գրատախտակին դարձյալ գրում եմ հետևյալ բառերը և հանձնարարում եմ գտնել, թե ինչ է տեղի ունեցել.

թեկնածություն

քսություն

հոգաբարձություն

Այսպիսի աշխատանքները զարգացնում են աշակերտի տրամաբանությունը և մտածողությունը: Առաջարկում եմ գտնել այդ բառերի արմատները: Դրանք են՝

թեկնածու

քսու

հոգաբարձու

Ուշադիր դիտելով գտնում են, որ **ու** ձայնավորը սղվել է, ավելացել **ություն** ածանցը:

Անդրադառնում եմ բառասկզբում **ու**-ով սկսվող ընդամենը 3 բառերի հնչյունափոխությանը՝

ումպ – ըմպել, ըմպանակ /ու > ը/

ունդ – ընդեղեն /ու > ը/

ունչ – ընչաքաղց /ու > ը/

Իմ հաջորդ առաջադրանքը լինում է հետևյալը. տրված բառերով կազմել այնպիսի բառեր, որոնց մեջ **ու**-ն չհնչյունափոխվի: Եվ տեսնում ենք, որ նույն բառը մի տեղ հնչյունափոխվում է, մի այլ տեղ չի հնչյունափոխվում /ինչը տեսել էինք նաև մյուս ձայնավորների հնչյունափոխությունը անցնելիս/: Գրում եմ հետևյալ բառերը՝ *երկու, հուր, թուխ, տուն* և այլն:

Իմ օգնությամբ կազմում ենք հետևյալ բառերը.

երկու – երկուական, լուռ – լուռումունջ

հուր – հուրհեր, սուտ – սուտասան

թուխ – հացթուխներ, մուտք – մուտքագրել

տուն – մեծատուններ, տունդարձ

Հաջորդ դասին ամրապնդում եմ անցածը և կազմում ենք **ու**-ի հնչյունափոխության գծակարգը:



Իբրև տնային աշխատանք հանձնարարում եմ գրել շարադրություն «Բնության գրկում» վերնագրով՝ օգտագործելով հետևյալ բառերը. *նռենի, տնկի, ձկնորս, ծաղկեփնջեր, երեսնամյա, անասնապահ, աշնանացան, օդաչուական*:

Հանձնարարում եմ նաև *լեզու, սուտ, ձուկ, ջուր, գլուխ* բառերով գրել դարձվածքներ՝ օգտվելով բառարաններից:

Մաս 4 Ը ձայնավորի հնչյունափոխությունը

Ը ձայնավորի հնչյունափոխությունը ըստ էության տարբերվում է բոլոր ձայնավորների հնչյունափոխությունից: Գիտենք, որ հնչյունափոխության պատճառը ձայնավորի՝ շեշտից զրկվելն է: Հինգերորդ դասարանի դասագրքում նշվում են միայն այն բառերը, որոնք համարվում են մեկուկես վանկանի բառեր, կամ դրանք երկվանկանի այն բառերն են, որոնց երկրորդ վանկը գաղտնավանկի ը-ն է, որը չի շեշտվում, ուրեմն ը-ի սղվելը այդ բառերում շեշտից զրկվելը չէ: Այդ բառերը հիմնականում կամ գոյականներ են կամ ածականներ:

Գոյականներ	Ածականներ
սանր	*մանր*
աստղ	*կարծր*
արկղ	*թանձր*
դուստր	*բարձր*
ուստր	*համր*
մեղր	*փոքր*
ազդր	*քաղցր*
կայսր	*ցածր*
անգղ	
գամփռ	
հյուսն	
տեսր	
վագր	

եզր
ստեղն
տեգր

Բառավերջի **ը** գաղտնավանկը սղվում է հիմնականում այն դեպքում, երբ ավելացող բաղադրիչը սկսվում է ձայնավորով: Մի քանի բառերում էլ սղվում է, երբ **յ** կիսաձայնով է ավելանում վերջնաբաղադրիչը:

Օրինակ՝ *ա՛ստ/ը/ղ - աստղայի՛ն* *մա՛ն/ը/ր – մանրո՛ւք*
ա՛րկ/ը/ղ – ակղի՛կ *կա՛րծ/ը/ր – կարծրատի՛պ*
դո՛ւստ/ը/ր – դստրի՛կ *թա՛նձ/ը/ր – թանձրությո՛ւն*
մեղ՛/ը/ր – մեղրածո՛ր *փո՛ք/ը/ր – փոքրի՛կ*
կա՛յս/ը/ր – կայսրուհի՛ *քա՛ղց/ը/ր – քաղցրի՛կ*
հյո՛ւս/ը/ն – հյուսնությո՛ւն *ցա՛ծ/ը/ր – ցածրի՛կ*
ե՛զ/ը/ր – եզրագի՛ծ *հա՛մ/ը/ր – համրությո՛ւն*
ստե՛ղ/ը/ն - ստեղնաշա՛ր

ինչպես նաև՝ *բա՛րձ/ը/ր – բարձրյա՛լ*
ա՛նձ/ը/ն - միանձնյա՛

«Սա ն/ը/ր» բառում **ը**-ն կարող է և՛ սղվել, և՛ չսղվել:

Օրինակ՝ *սանրել ը↑*
սան/ը/րվածք – **ը**-ն պահպանվեց

«Ակ/ը/ն» բառում **ը**-ն և՛ սղվում է և՛ չի սղվում՝
ակ/ը/ն – ակնոց, ակնապիշ /ը ↑/,

բայց՝ *ակ/ըն/դետ, ակ/ը/նկալել* բառերում **ը**-ն պահպանվեց:

Իսկ «ունկ/ն/» բառում **ը**-ն ընդհանրապես չի սղվում՝ *ունկ/ը/նդրել, ունկ/ը/նդիր…* Այս բառում ձայնավորով սկսվող վերջնաբաղադրիչ չի ավելանում: Իսկ որոշ բառերում **ն** հոդը դուրս է ընկնում և բնականաբար ը չի լսվում՝ *ունկեր, ունկավոր:*

Այժմ ուշադրություն դարձնենք հետևյալ փաստին: Արդեն ասվել է այն մասին, որ **ը** ձայնավորը թույլ է և չի շեշտվում: Բայց **ը**-ն շեշտվում է այն բնաձայնական բառային

միավորներում, որտեղ միակ ձայնարար հնչյունը **ը**-ն է և գրվում է: Այսպես՝ *գը՛ռռ, չը՛ռռ, դը՛խկ, շը՛խկ*… Երբեմն շեշտի փոխարեն դրվում է երկարացման նշան՝ *խը՜շշ, թը՜շշ* և այլն:

Երբ սրանցից կազմում ենք գոյական կամ բայ, **ը**-ն լսվում է, բայց չի գրվում, բնականաբար չի շեշտվում:

Օրինակ՝ *գը՛ռ – գռգռա՛լ, գռգռո՛ց*

չը՛ռռ – չռչռա՛լ /չռռա՛լ/, չռչռո՛ց

խը՜շշ – խշշա՛լ /խշխշա՛լ/, խշխշո՛ց

դը՛խկ – դխկո՛ց, դխկա՛լ

շը՛խկ – շխկո՛ց, շխկա՛լ և այլն:

Ամփոփենք – Այս բառերում **ը**-ի հնչյունափոխություն տեղի չունեցավ, մենք տեսանք, որ այն կամ գրվում է, կամ չի գրվում: Այս դեպքը ուսուցանելիս ավելի շատ ուսուցչի առջև դրվում է ուղղագրության ամրապնդում: Այս կանոնը անհրաժեշտ է իմանալ նաև տողադարձ անելիս, որտեղ ը-ն կգրվի՝

դխկոց – դըխ- կոց

շխկոց – շըխ-կոց

դմփոց – դըմ-փոց

թմփոց – թըմ-փոց և այլն

Ը ձայնավորի հնչյունափոխության հետ կապված ուզում եմ անդրադառնալ ևս մեկ դեպքի: Խոսքը վերաբերում է միավանկ այն բառերին, որոնք գրաբարում արտասանվում էին **ն** հոդով, և որից առաջ լսվում էր **ը** հնչյունը: Դրանք են՝ մո՛ւկ/ը/ն, ձո՛ւկ/ը/ն, ծո՛ւնկ/ը/ն, գա՛ռ/ը/ն, ե՛զ/ը/ն, ծո՛ռ/ը/ն, թո՛ռ/ը/ն, ձե՛ռը/ն, ո՛տ/ը/ն, կո՛ռ/ը/ն. *հա՛րս/ը/ն և այլն:*

Եվ ահա, երբ այս բառերին վերջնաբաղադրիչ ենք ավելացնում, **ն**-ից առաջ լսվող **ը**-ն սղվում է:

Օրինակ՝ *մկնիկ, ձկնորս, գառներ, հարսներ* և այլն:

Նկատենք, որ երբեմն էլ **ը**-ն պահպանվում է՝ *ձկ/ը/նկուլ, մկ/ը/նդեղ, ոտ/ը/նլվա, ձեռ/ը/նբաց, ձեռ/ը/նպահ…*

Այս ամենը 5-րդ դասարանում ուսուցանելը չափազանց դժվար կլինի, ինչպես նաև այդքան ժամաքանակ չի նախատեսված: Քանի որ ուսուցչին թույլատրվում է երբեմն շեղվել տրված ժամաքանակից, մեկ ժամի փոխարեն կարելի է անցնել երկու ժամով՝ օգտվելով կրկնության համար նախատեսված ժամերից:

Ը ձայնավորի հնչյունափոխության գծակարգը կլինի այսպես՝



Մաս 5

Անդրադառնանք նաև **ա** և **ո** ձայնավորների հնչյունափոխությանը: Այս ձայնավորների հնչյունափոխության մասին դասագրքերում ընդհանրապես որևէ խոսք չկա: Ճիշտ է, այնքան էլ շատ բառեր չկան, որոնց մեջ **ա** և բառամիջի **օ /ո/** ձայնավորները հնչյունափոխվում են, բայց և այնպես կան: Ես գտնում եմ, որ կարելի է մեկական ժամ հատկացնել նաև այս ձայնավորների հնչյունափոխությանը և ծրագրով նախատեսել նաև սրանց ուսուցումը:

Գրատախտակին գրում եմ հետևյալ բառերը և առաջարկում եմ դրանցով կազմել նոր բառեր: Այդ բառերն են՝

քաղա՛ք, կոճա՛կ, առա՛ջ, պատա՛ռ:

Եթե դժվարանում են, օգնում եմ, լրացնում: Կազմում ենք հետևյալ բառերը.

քաղա՛ք – քաղքենի՛ - ա↑

կոճա՛կ – կոճկե՛լ - ա↑

առա՛ջ – առջև՛ - ա↑

պատա՛ռ – պատռե՛լ - ա↑

Հանձնարարում եմ կազմել նախադասություններ:

Հաջորդ վարժությունը վերաբերում է այն բանին, երբ **ա**-ն դառնում է **ը:**

Գրատախտակին գրում եմ հետևյալ բառերը և հանձնարարում կազմել նոր բառեր՝ *կա՛րճ, շա՛ղ, պատառ:* Կազմում ենք հետևյալ բառերը՝

կա՛րճ – կրճա՛տ /ա > ը/

շա՛ղ – շղա՛ղշ /ա > ը/

պատա՛ռ – պատռվե՛լ /ա > ը/

Հաջորդ վարժությամբ իմ տված բառերից առաջարկում եմ կազմել կցական բարդություններ, որտեղ արմատը կրկնվում է: Այդ բառերն են՝ *ծա՛կել, վա՛զել, կա՛պել, թա՛փել:*

Եթե դժվարանում են, հուշում եմ բարդ բառերի տեսակները, և միասին կազմում ենք հետևյալ բարդ բառերը.

ծակե՛լ – ծածկ/ը/վե՛լ /ա > ը/

վազե՛լ – վազվ/ը/զե՛լ /ա > ը/

կապե՛լ – կապկ/ը/պե՛լ /ա > ը/

թափե՛լ – թափթ/ը/փե՛լ /ա > ը/

Աշակերտների ուշադրությունը հրավիրում եմ այն բանին, որ այս բայերում **ա** ձայնավորը չի շեշտված, բաց կրկնված արմատում **ա**-ն դարձել է **ը**:

Այնուհետև այս բոլոր բառերով կազմում ենք այնպիսի բառեր, որտեղ **ա**-ն չի հնչյունափոխվում, երբ շեշտից զրկվում է:

Օրինակ՝ *քաղա՛ք – քաղաքայի՛ն /պահպանվում է/*

կոճա՛կ – կոճակաման

առա՛ջ – առաջնո՛րդ, առաջնայի՛ն

շա՛ղ – շաղո՛տ

կա՛րճ – կարճատե՛ս, կարճանա՛լ

վա՛զ/ք/ - վազա՛նց

կա՛պ – կապոց

թա՛փ – թափո՛ն

պատա՛ռ – պատառոտե՛լ

ծա՛կ – ծակոտկե՛ն

Ա ձայնավորը ընդհանրապես կայուն է, հեշտությամբ չի հնչյունափոխվում: Գրում ենք բազում բառեր, որտեղ պահպանվում է. *ամա՛ն, դարա՛կ, պարա՛ն, պահարա՛ն, հա՛ց, բա՛կ* և այլն:

Իհարկե, մենք անդրադառնում ենք բարբառային կամ առօրյա-խոսակցական ձևերին, որտեղ **ա**-ն հնչյունափոխվում է *քաղքըցիք /ա ↑/, ծըկուծուկ /ա > ը/* և այլն:

Ուզում եմ խոսել «արքա» բառի մասին, որտեղ բառավերջի բաց վանկի **ա**-ն սղվում է հետևյալ բառերում՝

արքա՛ – արքենի՛ /արքային վայել/

արքա՛ – արքունի՛ք

արքա՛ – արքունակա՛ն

արքա՛ – արքարժա՛ն

<u>Ա</u>-ն նաև պահպանվում է՝ արքայակա՛ն, արքայի՛, արքայաբա՛ր և այլն: Թերևս <u>ա</u>-ի հնչյունափոխություն կա «դժնի» բառում /դաժան/[3]:

Ըստ Աճառյանի այս բառը պահլավերենից է վերցված *«դուաժ»* բառն է, բացատրվում է *«չար»* իմաստով: Սրանից է դժնիկ բառը, որը նշանակում է սուր փշերով բույս, նաև նշանակում է չար մարդ՝ դաժան: Ուրեմն ենթադրվում է, որ «դժնի» բառը դաժան է նշանակում՝ ի ածանցի ավելացումով, և որի մեջ հնչյունափոխության է ենթարկվել <u>ա</u> ձայնավորը:

Մաս 6

Խոսենք նաև բառամիջի <u>օ/ո</u>/ ձայնավորի հնչյունափոխության մասին: Դարձյալ քիչ բառեր կան, որտեղ <u>ո</u>-ն հնչյունափոխվում է, բայց կան: Դրանք այնպիսի բառեր են, որոնք մենք ամեն օր օգտագործում ենք մեր խոսքում: Ցանկալի կլինի, որ <u>ո</u>-ի հնչյունափոխությունը մտցվի դպրոցական ծրագիր:

Գրատախտակին գրում եմ հետևյալ բառերը՝ *մո՛տ, օրո՛ր, կոտո՛ր,* և դրանցով մտագրոհի միջոցով փորձում ենք նոր բառեր կազմել: Աշակերտները շատ արագ գրում են և «օրորոց» բառ, և «օրրան» բառը, որից էլ կազմում են նաև «բնօրրան» բառը: Կազմում ենք հետևյալ բառերը.

մո՛տ – մտերիմ, մտերմի՛կ /ո > ը/

կոտո՛ր – կոտրվե՛լ, կոտրվա՛ծք /ո > ը/

Հաջորդ վարժությամբ կազմում ենք այնպսի բառեր, որոնց մեջ <u>ո</u>-ն պահպանվում է՝

մո՛տ – մոտակա՛, մոտակա՛յք

օրո՛ր – օրորո՛ց, օրորոցայի՛ն

կոտոր – կոտորա՛կ – կոտորակային

<u>Ո</u>-ն սղվում է հետևյալ բառերում՝

օրո՛ր – օրրա՛ն

կոտո՛ր – կոտրե՛լ

[3] Հր. Աճառյան, 1-ին հատոր, Արմատական բառարան, էջ 663

Ամրակայելու նպատակով հանձնարարում եմ այդ բառերով կազմել նախադասություններ, ցանկացողները կազմում են տեքստ:

Նմանատիպ աշխատանքները աշակերտների մեջ մեծ հետաքրքրություն են առաջացնում, և սիրով կատարում են:

Ճիշտ է **ո**-ի հնչյունափոխությամբ բառեր ավելի քիչ կան, բայց կան, և պատահում է, որ երբեմն որոշ աշակերտներ նկատում են և հարց են տալիս /ինչը շատ ուրախալի է/:

Կազմում ենք նաև **ա** ձայնավորի հնչյունափոխության գծապատկերը:



Կազմում ենք նաև **ո** ձայնավորի հնչյունափոխության գծապատկերը:



ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Հնչյունափոխ Ձայնավորներ	Ձայն սկսվող միավանկ բառերում	Փակ վանկի միավանկ բառերում	Բազմավանկ բառերում	Բառավերջում	Բազմավանկ բառերի վերջ. փակ վանկ.	Բազմավանկ բառերի վերջ. բաց վանկ	Բաց վանկի ի-ն ակ ածանց առ.	Բազմ. բառերի փակ վանկում
է/ե/	ի	ի	ի	-	↑	-	-	-
ի	ը	ը	ը	ի+ա = ե	↑	↑	յ	-
ու	ը	ը	ը	վ	↑	վ	-	-
ը	-	-	↑	-	ը	-	-	
ա	-	-	ը	↑	↑	↑	-	-
ո	-	ը	↑	-	-	-	-	-

Ինչպես արդեն ասվել է, բոլոր ձայնավորներն էլ շեշտից զրկվելով, նաև պահպանվում են:

Մեր ուժերով կազմած այս աղյուսակը մշտապես պահվում է աշակերտի մոտ և հարկ եղած դեպքում դրանից կարելի է օգտվել:

Գրականության ցանկ

1 Յուրի Ավետիսյան, Հ.Զաքարյան – Հնչյունաբանություն, էջ 72

2 Յուրի Ավետիսյան, Հ.Զաքարյան – Հնչյունաբանություն, էջ 77

3 Հր. Աճառյան, 1-ին հատոր, Արմատական բառարան, էջ 663

4 Հր. Աճառյան, 1-ին հատոր, Արմատական բառարան

5 Յուրի Ավետիսյան, Հ.Զաքարյան – Հնչյունաբանություն,

6 ՀՀ Հանրագիտարան